Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Եղինյան

քննարկվել է Քարինջի միջնակարգ դպրոցի
մանկավարժական խորհրդի՝
31.08.2023 թ. թիվ 1 նիստում

Կ.Տ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԻՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023-2024 ուստարի

Ն Ա Խ Ա Բ Ա Ն
(Ընդհանուր դրույթներ)

Մարդկության գոյատևումն ու առաջընթացն ապահովող հիմնական գործոնը կրթությունն է: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգի բոլոր օղակների և մասնակիցների վրա՝ պայմանավորելով տարատեսակ խնդիրների առաջադրման և լուծման անհրաժեշտությունը:

Հայաստանի հանրապետությունում կրթությունը երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք է: Կրթությունն անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակամղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն:

Հանրակրթական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը բարդ և բազմաբովանդակ գործընթաց է: **Այն հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է միավորել մանկավարժական կոլեկտիվի, ծնողների և համայնքի ջանքերը:** Դա հնարավոր է անել աշխատանքի գիտական կազմակերպման, գլխավոր հարցերը առանձնացնելու, լուծման առաջնահերթությունը, ժամկետներն ու կատարող անձինք որոշելու միջոցով:

Դպրոցի գործունեության սույն պլանավորումն իրականացված է գիտականության սկզբունքի հիման վրա, համապատասխանում է մանկավարժության, հոգեբանության նվաճումներին, դպրոցի կառավարման ժամանակակից պահանջներին, ՀՀ ԿԳ նախարարության որոշումներին, հաշվի է առնված առաջավոր փորձը և կրթության մարզային լիազորված մարմնի հանձնարարականները:

Աշխատանքների տարեկան պլանն ունի հետևյալ բաժինները. *հիմնական պարտադիր կրթության իրականացում, աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացում, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում, ներդպրոցական վերահսկողության համակարգ, աշխատանք ծնողների հետ, ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում, կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ:*

Միաժամանակ պետք է նշել, որ դպրոցի աշխատանքների սույն տարեկան պլանը քարացած չէ: Որոշ հարցեր տարվա ընթացքում կարող են կորցնել իրենց սրությունը, փոխարենը կիսամյակի արդյունքներն ամփոփելիս կարող են առաջանալ նոր հարցեր ու խնդիրներ:

Սույն ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից բխում են մյուս օղակների աշխատանքային պլանները:

ԲԱԺԻՆ 1
Հիմնական պարտադիր կրթության իրականացում

Այս բաժնում շեշտը դրվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, պարտադիր ուսուցման ենթակա երեխաներին ուսման մեջ ընդգրկելու և մաղումների դեմ պայքարելու հարցերի վրա:

Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է աշակերտների ուսուցանմանը և ուսանմանը, նրանց առաջադիմության բարձրացմանը, բարոյական ու մարդասիրական բարձր հատկանիշներով օժտված քաղաքացիների և հասարակությանը նպաստ բերող, ազգանվեր ու գործուն անհատների դաստիարակմանը, համայնքի գոհունակության ապահովմանը, ազգային և համամարդկային արժեքների զուգակցմանը:

Դպրոցի տնօրենը և ուսուցիչները պետք է համագործակցեն դպրոցի կարիքների գնահատման և նպատակների հստակեցման հարցերում:

Դպրոցի տնօրենը և ուսուցիչները պետք է հասկանան դպրոցի նպատակները և նվիրվեն դրանց իրագործմանը:

Վարչական աշխատողները, ուսուցիչները, աշակերտներն ու ծնողները պետք է իրազեկ լինեն դպրոցի նպատակներին ու առաքելությանը:

Դպրոցի նպատակները ուղենիշ են հանդիսանում տարբեր խնդիրների ու գործունեության պլանավորման համար: Խնդիրները բխում են նպատակներից: Դրանք կարճ ժամկետում իրականացվող անելիքների վերաբերյալ սահմանումներ են: Խնդիրներն իրականացվում են համապատասխան առաջադրանքների կատարման միջոցով: Կատարված առաջադրանքների արդյունքները, որոնք հանգեցնում են խնդիրների իրագործմանը, կատարողականներն են:

Անհրաժեշտ է այնպես անել, որ աշխատակիցները հստակորեն ըմբռնեն դպրոցի ա-նելիքները համընդհանուր ուսման որակ ապահովելու գործում:

Ներկա ուստարվա խնդիրները սահմանվում են նախորդ ուստարվա թերություններն ու բարդությունները հաշվի առնելով:

h/h	Աշխատանքի համառոտ բովանդակությունը	կատ. ժամկետ	Կատարող անձ	նշումներ կատարման մասին
1	2	3	4	5

ԲԱԺԻՆ 2
Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացումը

Այս բաժնում պլանավորված են մանկավարժական կադրերի ընտրության, տեղաբաշխման, մասնախմբերի ղեկավարների ու դասղեկների նշանակման, ուսուցչի ինքնակրթության և կատարելագործման համար նորմալ պայմանների ստեղծման, մանկավարժական կադրերի գիտատեսական և մեթոդական մակարդակի բարձրացման, ուսուցիչներին մանկավարժական հետազոտական աշխատանքներում ներգրավելու, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրդ-ման, ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպման և այլ հարցեր:

Ուսումնական գործընթացում ուսուցիչն ու դպրոցը կարող են ընտրել առարկայական չափորոշչով սահմանված կրթական մակարդակ ապահովող ցանկացած մանկավարժական տեխնոլոգիա և մեթոդ: Հանրակրթության պետական կրթակարգի պա-հանջների կատարմանա համար Քարինջի միջնակարգ դպրոցը և դպրոցի յուրաքան-չյուր ուսուցիչ պետք է կարողանա և ձգտի ապահովել.

1. Ուսուցման արդյունավետությանը նպաստող մթնոլորտ և ֆիզիկական միջավայր:
2. Գիտելիքների յուրացմանը, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված ուսուցման և դաստիարակության միասնականացում:
3. Սովորողի կարողություններին համապատասխան առավելագույն կրթական մա-կարդակ ապահովող անհատական մոտեցում:
4. Ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի հարաճուն մասնակցություն:
5. Սովորողների կարողությունների աճին համապատասխան կրթական նոր պահանջների առաջադրում, զարգացող ուսուցման կազմակերպում:
6. Ուսուցման և դաստիարակության գործընթացում սովորողի անձնական կենսափորձը հաշվի առնելը:
7. Միջառարկայական կապերի ստեղծմանն ուղղված տարբեր հնարքների ու միջոցների կիրառումը:
8. Սովորողների և ուսումնական գործընթացի շարունակական և տարաբնույթ գնահատում:

1	2	3	4	5
1	Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները:	08-12/09	տնօրեն	
2	Դպրոցում կազմակերպել մանկա-վարժության և տարիքային հոգե-բանության մշտական գործող սեմինար ուսուցիչների համար:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Դասղեկների աշխատանքը կատարելագործելու նպատակով դպրոցում կազմակերպել առարկայական մեթոդմիավորումներ (մասնախմբեր)	01-05/09	տնօրեն	
4	Պլանավորել մասնախմբերի գործունեությունը:	08-12/09	տնօրեն, մ/մ նախագահներ	
5	Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ	
6	Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերարորակավորման և ատեստավորման նախապատրաստական դասընթացներում (ըստ պահանջի)	ուստարվա ընթացքում	տնօրեն	
7	Դասալսումների միջոցով մեթո-	ուստարվա	տնօրեն, , մասնախմբերի	

	դական օգնություն ցույց տալ մանկավարժներին:Հատուկ ուշադրություն դարձնել սկսնակ ուսուցիչների վրա (Դասալսումները կատարել միջին հաշվով շաբաթական 13-16 ժամ(տնօրեն՝ 4-5, փոխտնօրեն՝ 7-8, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3):Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն- հանձնարարություններ:	ընթացքում	նախագահներ	
8	Կազմակերպել սկսնակ ուսուցիչների ստաժավորման գործը, նրանց կցել որակյալ ուսուցիչների, կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ	
9	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժական գիտության նորագույն նվաճումներին:	ուստարվա սկզբին	տնօրեն, մ/մ նախագահներ	
10	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, կրթության և գիտության նախարարության հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, փոխտնօրեն	
11	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ, որոնք կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր աշխարհի զարգացմանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	
12	Պահանջել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուստարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական-մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել առարկայական մասնախմբում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մասնախմբերի նախագահներ	
13	Պլանավորել ,Հետազոտական դպրոց, մանկավարժական լաբորատորիաե ներդպրոցական միավորման աշխատանքները՝	01-12/09	տնօրեն, մ/մ նախագահներ	

	տնօրենի ղեկավարությամբ: Միավորման մեջ ընդգրկել 5-9 իրենց աշխատանքին ստեղծագործաբար մոտեցող, ունեցող ուսուցիչներ:		տնօրեն	
14	Ուսումնասիրել մանկավարժական առաջավոր փորձը և տարածել դպրոցում:Այն իրականացնել ,Հետազոտական դպրոց, մանկավարժական լաբորատորիաե ներդպրոցական միավորման անդամների և առարկայական միավորումների նախագահների միջոցով:	մշտապես		
	Մանկավարժական խորհրդում ներկայացնել զեկուցումներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
15	Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննություններին նախապատրաստելու համար:	մայիս	տնօրեն	
16	Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ:	մայիս	տնօրեն	
17	Յուրաքանչյուր առարկայական մանախմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը, արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ առարկայական մասնախմբում՝ տալով համապատասխան գնահատական: հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
18				

ԲԱԺԻՆ 3

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

Սա տարեկան աշխատանքային պլանի գլխավոր բաժիններից մեկն է: Այն պլանավորված է այն հաշվով, որ կրթության բովանդակության ընդհանուր պահանջները սահմանված են ուսումնական ծրագրերում, իսկ դրանց անցման ժամկետները՝ թեմատիկ պլաններում: Ուստի անհրաժեշտ է որոշել ուսուցման կատարելագործման ուղի-ները՝ ելնելով հաստատության կոնկրետ պայմաններից:

Այս բաժնում նախատեսված են հարցեր, որոնք կապված են ուսման նկատմամբ սովորողների մոտ գիտակցական վերաբերմունքի մշակման, նրանց ճանաչողական հե-տաքրքրությունների, անհատի բազմակողմանի զարգացման, անհատականության ձևավորման, մասնագիտական կրթական ծրագրերի գիտակցական ընտրության հետ:

Չափազանց կարևոր է տարրական դասարաններում ուսուցման մակարդակի բարելավումը, տարբեր առարկաների դասավանդման մակարդակի սիստեմատիկ ու-սումնասիրումը և վերլուծումը: Մեծ նշանակություն է տրվում միջին և ավագ դպրո-ցում ուսուցման ընթացքում աշակերտների ինքնուրույն աշխատանքի ուժեղացումը, ծրագրերի կատարման հաշվառումը, ուսուցման ձևերի, մեթոդների ու միջոցների կա-տարելագործումը:

Միաժամանակ պետք է նշել, որ ուսուցումը և դաստիարակությունը գտնվում են սերտ կապի մեջ և դրանք պետք է դիտել որպես միասնական գործընթաց: Եվ ուսուցումը և դաստիարակությունը միայն դասով չի սահմանափակվում, այն շարունակվում է նաև արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների միջոցով:

Դաստիարակչական աշխատանքների հիմքում պետք է դնել հաստատության կանո-նադրության պահանջը՝ սովորողների անհատականության ձևավորումը, նրանց նա-խապատրաստումն ինքնուրույն կյանքի և աշխատանքի, հասարակական համակե-ցության կանոնների պահպանում, քաղաքացիության և հայրենասիրության ոգով դաստիարակում: Սակայն դա չի նշանակում, որ հաստատությունը չպետք է զբաղվի սովորողների բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային, բնա-պահպանական, իրավական և սեռական դաստիարակության հարցերով:

Պլանում նշված միջոցառումներն ու հարցերը ամեն դեպքում պետք է կոնկրետացվեն՝ ելնելով սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից, հաստատության պայմաններից և հնարավորություններից:

1	2	3	4	5
1	Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով:	ուստարվա սկիզբ	տնօրեն, մ/մ նախագահներ	
2	Օգնել դասղեկներին ժամանակին կազմելու աշխատանքային պլանները և հետևել նախատեսված միջոցառումների կատարմանը:	12/9 12/2	մ/մ նախագահներ	
3	Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան:	ուստարվա ընթացքում	տնօրեն,	
4	Աշխատանք տանել լաբորատորիան և համակարգչային կաբինետը անհրաժեշտ նյութերով ու սարքավորում-	ուստարվա ընթացքում	տնօրեն,	

	ներով կահավորելու ուղղությամբ:			
5	Աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով ապահովելու ուղղությամբ:	25-29/08	տնօրեն, գրադարանավար	
6	Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում, տնօրենին կից խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ	
7	Ուսումնասիրել մայրենի լեզվի և մաթեմատիկայի դասավանդման վիճակը առաջին դասարանում և արդյունքները քննարկել մասնախմբում:	կիսամյակի վերջին	տնօրեն, մ/մ նախագահ տնօրեն, մ/մ նախագահ	
8	Հատուկ ուշադրություն դարձնել տարրական դասարանների առարկայական ծրագրերի կատարմանը և դրանց յուրացման որակին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մ/մ նախագահներ	
9	Անցկացնել ներդպրոցական օլիմպիադա	01-19/12	տնօրեն	
10	**Դասղեկական աշխատանք**. ա) Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխա-տանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաս-տատման: բ) Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. *ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ սերմանել ազգային արժանապատվություն և հպարտություն, դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:*	01-12/09 ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ, դասվարներ տնօրեն,	

	գ) Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
	դ) Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել **աշակերտ-դպրոց-ընտանիք** կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ, դասվարներ դասղեկներ, դասվարներ	
	ե) Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3-5 հոգուց), ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	01-12/09	տնօրեն, դասղեկներ	
11	**Գեղագիտական դաստիարակություն** ա) Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
	բ) Սովորողների օգնությամբ ձևավորել դպրոցական շենքի միջանցքներն ու դասարանները:	ուստարվա ընթացքում	դասվարներ	
	գ) Անցկացնել վարվեցողության կուլտուրայի պարապմունքներ 1-4-րդ դասարաններում:	ուստարվա ընթացքում	գրադարանավար	
	դ) Անցկացնել զրույց. «Գիրքը իմ լավագույն բարեկամն է» թեմայով:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
	ե) Կազմակերպել համադպրոցական միջոցառումներ նվիրված Նոր Տարվան (1-4 դաս. համար տոնածառ, միջին և ավագ դասարանների համար՝ Ամանորյա դիմակահանդես)	դեկտեմբեր	դասղեկներ	
	զ) Միջին և ավագ դպրոցի սովո-	ուստարվա		

	րողների համար կազմակերպել զրույց. «Դպրոցը մեր տունն է, նրա ունեցվածքը մեր սեփականությունն է» թեմայով	ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
	է) Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ հանրապետության տարբեր վայրեր, հանդիպումներ այլ դպրոցների սովորողների հետ:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, դասվարներ	
	ը) Կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ՝ ինքնա-սպասարկում, դասարանի կահավորում և այլն:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
	Ֆիզիկական դաստիարակություն			
12	ա) Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով համալրել հաստատության մարզական գույքը:	ուստարվա ընթացքում	դասղեկներ դասվարներ	
	բ) Կանոնավոր կերպով անց-կացնել առավոտյան լիցքային վարժություններ, առողջա-րարական դասամիջոցներ, մարմնակրթական րոպեներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ֆիզկ. ուսուցիչ, դասղեկներ	
	գ) Տարբեր մարզաձևերից կազ-մակերպել միջդասարանական մրցումներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուսուցիչներ ֆիզկ. ուսուցիչ,	
	դ)Խստորեն վերահսկել մարզա-հրապարակում, ուսումնական արհեստանոցում, լաբորա-տորիայում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանումը: Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակի կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները:	մշտապես	դասղեկներ	
	ե) Անցկացնել զրույց 8-10-րդ դասարանների աշակերտների օրվա ռեժիմի և անձնական			

	հիգիենայի մասին:	ուստարվա ընթացքում		
13	**Ռազմահայրենասիրական աշխատանք** ա) Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, հայկական բանակի հրամանատարների, Արցախի պաշտպանության մարտերում աչքի ընկած զինվորների և սպաների հետ: բ) Անցկացնել ցերեկույթ նվիրված Անկախության օրվան: գ) Ծաղիկներ դնել Անհայտ զինվորի, արցախյան ա-զատամարտի նահատակների հուշարձաններին:	ուստարվա ընթացքում 21/09 09/05	զինղեկ, դասղեկներ դասղեկներ զինղեկ, դասղեկներ	
14	**Աշխատանքային դաստիարակություն** ա) Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: Կարգի բերել արհեստանոցը: բ) Աշակերտների ուժերով կատարել դպրոցամերձ հողամասի մշակման և խնամքի աշխատանքներ: գ) Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամք,ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորել դասարանները: **Գրադարանային աշխատանք.** ա) Կազմել և հաստատման ներկայացնել գրադարանավարի տարեկան աշխատանքային պլանը:	ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում 01-12/09	տնօրեն, ուսուցիչներ ուսուցիչներ դասղեկներ, դասվարներ գրադարանավար	

15	բ) Դպրոցի հնարավորություն-ներից ելնելով հարստացնել գրադարանային ֆոնդը: գ) Վերանորոգել գրադարանա-յին ֆոնդի դասագրքերն ու գրքերը: դ) Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: ե) Ստեղծել ,Պատանի ստեղծագործողիե ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը, ի հայտ բերել տաղանդավոր երեխաների: զ) Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը: է) Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստա-թղթեր:	տարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն գրադարանավար, դասղեկներ գրադարանավար գրադարանավար, հայոց լեզվի ուսուցիչներ գրադարանավար տնօրեն, գրադարանավար	

ԲԱԺԻՆ 4
Ներդպրոցական վերահսկողության համակարգ

Վերահսկողությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետու-թյան բարձրացման ուղիներից մեկն է: Այն ընդգրկում է դպրոցի գործունեության բո-լոր կողմերը: Առավել կարևոր խնդիրների լուծման կառավարության և նախարարու-թյան որոշումների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրակա-նացնելու համար անհրաժեշտ են հավաստի տեղեկություններ դպրոցի տարբեր օ-ղակների և ուսուցիչների աշխատանքի վերաբերյալ: Նման տեղեկություններ տնօրի-նությունը ստանում է տարբեր աղբյուրներից: Դրանցից ամենակարևորը դասալսում-ներն են, ուսուցիչների և աշակերտների հետ զրույցները, աշխատանքային պլաննե-րի, դասամատյանների, սովորողների տետրերի, օրագրերի, մասնախմբերի աշխա-տանքային պլանների և այլ

փաստաթղթերի ստուգումները, ինչպես նաև տնօրինու-թյան կողմից տրվող ստուգողական աշխատանքների, քննությունների արդյունքները:

1	2	3	4	5
1	Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները: Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագիրը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումը:	08-12/09	տնօրեն, մ/մ նախագահներ	
4	Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել սովորող-ների ուշացումներն ու բացակա-յությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
5	Ստուգել հիմնական պարտադիր կրթության օրենքի կատարման վիճակը դպրոցում՝ ելնելով հան-րակրթական հաստատության կանոնադրության պահանջնե-րից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցու-թյունում:	նոյեմբեր-դեկտեմբեր	տնօրեն, մ/մ նախագահներ	
6	Մասնախմբերի օգնությամբ ստուգել ուսուցման տեխնիկա-կան միջոցների օգտագործման վիճակը:	դեկտեմբեր - ապրիլ	տնօրեն, մ/մ նախագահներ	
7	Ավարտական դասարանների սո-վորողների գիտելիքներին, կա-րողություններին ու հմտություն-ներին ծանոթանալու և համա-պատասխան աշխատանք կազ-մակերպելու նպատակով ստու-գողական գրավոր աշխատանք-	դեկտեմբեր - ապրիլ	տնօրինություն, մ/մ նախագահներ	

8	ներ անցկացնել հայոց լեզվից և մաթեմատիկայից և արդյունքները քննարկել մասնախմբերում:		տնօրեն, մ/մ նախագահ	
9	Ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին և նորմերին:	տարեկան երկու անգամ	տնօրեն, մ/մ նախագահ	
10	Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարումը քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության դասերին:	հոկտեմբեր - ապրիլ	տնօրինություն, մ/մ նախագահներ	
11	Ստուգել 9-րդ դասարանում հայոց, ռուսաց և անգլերեն լեզուներից և մաթեմատիկայից տրվող ստուգողական աշխատանքների քանակը և որակը՝ արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում:	կիսամյակների վերջում	տնօրեն	
12	Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը (քանակական և որակական տեսակետից) և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
13	Ստուգել դասամատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը:	պարբերաբար	տնօրեն, դասղեկներ	
14	Ստուգել դժվարությամբ առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները, արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:	հոկտեմբեր - մարտ	տնօրեն	
	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստում:	ուստարվա ընթացքում		

ԲԱԺԻՆ 5
Աշխատանք ծնողների հետ

Այս բաժնում պլանավորված են դպրոցի, ընտանիքի և համայնքի կողմից տարվող համատեղ աշխատանքները: Ընդ որում շեշտը դրվում է ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածման, սովորողների պարտադիր ուսուցման և դաստիարակության իրականացման, հաստատության ծնողական խորհրդի գործունեության կազմակերպման, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության և խնամակալության հետ կապված հարցերի վրա:

Հասարակայնորեն ակտիվ դպրոց դառնալու համար անհրաժեշտ է ձերբազատվել դպրոցը միայն գիտելիքների աղբյուր դիտարկելուց: Անհրաժեշտ է նրան ներգրավել հասարակական խնդիրների լուծմանը, դարձնել այն մշակութային ռեսուրսների կենտրոն:

Մեր աշխատանքի հիմքում դրվում է դպրոց-ընտանիք-համայնք և ընտանիք-դպրոց-համայնք կապերի ամրապնդումը:

Թեև համայնքի մասնակցությունը համարում ենք դպրոցի աշխատանքի բարելավման կարևոր միջոց, սակայն այդ մասնակցության ամենագործուն դերը վերապահում ենք ուսուցիչներին, որոնք օգտագործում են ծնողների հետ իրենց հաստատած հարաբերությունները:

Դպրոցի գործունեությանը համայնքի մասնակցության աստիճանը կարող է ունենալ այսպիսի սանդղակի տեսք.

1. Երեխայի դպրոց հաճախելն ապահովելը ծնողի կողմից:
2. Անհրաժեշտ նյութերի, անձնական աշխատուժի տրամադրում:
3. Երեխային ցուցաբերվող օգնությունը տանը: Մասնակցություն դասերի պատրաստմանը և այլն:
4. Այցելություններ դպրոց, մասնակցություն միջոցառումներին, խորհուրդներ տալն ու ստանալը:
5. Դպրոցի վերահսկողություն: Մասնակցություն որոշումների ընդունմանը:

Ուսուցիչները ծնողներին պետք է վերաբերվեն որպես երեխայի կրթության հարցում իրենց գործընկերների և համագործակիցների:

1	2	3	4	5
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել ծնողական խորհրդի անդամներ և նախագահներ:	01-12/09	տնօրեն, դասղեկներ, դասվարներ	
2	Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ, նրա անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրության հետ:	սեպտեմբեր	տնօրեն,	
3	Կազմել ծնողների համար անց-	01-12/09	դասղեկներ, դասվարներ	

4 5 6	կացվող զրույցների ու զեկուցումների թեմատիկ պլան: Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման համար: Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխա-տանքներում:	սեպտեմբեր ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողխորհ.նախագ. տնօրեն, տնօրեն, դասղեկներ, դասվարներ	

ԲԱԺԻՆ 6
Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում

Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ՝ բարեկարգ դպրոցական շենք, մարզահրապարակ, հակահրդեհային և սանիտարահիգիենիկ կայուն ռեժիմ, կաբինետներում և արհեստանոցներում անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում և այլն:

Այս բաժնում նախատեսվում են դպրոցական շենքի պահպանման, ձմռանը նախապատրաստվելու միջոցառումները: Կազմվում են ձեռք բերվելիք կահույքի, և սարքավորումների ցանկ, նախահաշիվ, տարիֆիկացիա, վիճակագրական հաշվետվություն-ներ և այլն:

1	2	3	4	5
1 2 3	Կատարել տարիֆիկացիան Կազմել բյուջետային ծախսերի նախահաշիվ Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսուցման տեխնիկական միջոցների , դիդակտիկ	սեպտեմբեր ֆինանս. տարվա ընթացքում ուստարվա ընթացքում	տնօրեն, վարձաչափային հանձնաժողով տնօրեն, գլխ. հաշվապահ տնօրեն	

	պարագա-ների և այլ նյութերի օգտագործ-ման և պահպանման ուղղու-թյամբ:			
4	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի և սարքավորում-ների հաշվառում:	նոյեմբեր	տնօրեն,	
5	Ապահովել շենքի ջերմային, լու-սային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	տնօրեն,	
6	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը, մարզա-հրապարակը: Հետևել անվտան-գության տեխնիկայի կանոն-ների պահպանմանը:	տարվա ընթացքում	տնօրեն, դասղեկներ	
7	Աշխատանք տանել գրադարա-նի հարստացման, եղած գույքն ու սարքավորումները արդյունավետ օգտագործելու օգտագործելու ուղղությամբ:	սիստեմատիկ	գրադարանավար	

ԲԱԺԻՆ 7
Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

Այս բաժնում պլանավորված են տնօրենին կից խորհրդակցությունները, դպրոցի գործունեությունը լուսաբանող աշխատանքները, դասարանների կոմպլեկտավորու-մը, դպրոցի նոր ուսումնական տարվան նախապատրաստմանը, ուսումնադաստիա-րակչական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևա-կերպմանը, ղեկավարության միջև աշխատանքի բաժանմանը վերաբերող և այլ հար-ցերը:

1	2	3	4	5
1	Կատարել աշխատանքի բաժա-նում դպրոցի ղեկավարների միջև:	27-29/8	տնօրեն	
2	Կոմպլեկտավորել դասարան-ները:	27-29/8	տնօրեն	
3	Սահմանել աշխատանքային ռեժիմը:	27-29/8	տնօրինություն	

4	Նշանակել դասվարներ և դաս-ղեկներ:	01/09	տնօրեն	
5	Նշանակել առարկայական մաս-նախմբերի նախագահներ	01/09	տնօրեն	
6	Ուսումնական գույքը և սարքա-վորումները նախապատրաստել ուս. տարվա սկզբին:	25-29/8	գրադարանավար	
7	Առաջին դասարան ընդունվող երեխաներին նախապատրաստել ուսումնական տարվա սկզբին:	27-29/8	տնօրեն, դասվար դասվարներ, դասղեկներ	
8	Կարգավորել աշակերտական գործերը:	27-29/8	տնօրեն, դասվարներ, դասղեկներ	
9	Ձևավորել էլ. դասամատյանները:	սեպտ. սկզբին	տնօրեն	
10	Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ:	շաբաթը մեկ անգամ	տնօրեն,	
11	Սահմանել կարգ. Յուրաքանչյուր ուսուցիչ աշխա-տանքի ներկայանա դասերն սկսվելուց 15 րոպե առաջ՝ ըստ ,Աշխատանքի ժամանակացույ-ցիե՝ հիմք ընդունելով ,Ներքին կարգապահական կանոնները: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել տնօրենի վրա:	ուստարվա ընթացքում		
12	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում կազմակերպել ամենօրյա հերթապահություն: Պահանջել հերթապահներից հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնա-կան մասնաշենքերում:	ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում	տնօրեն,	
13	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները:		տնօրեն դասղեկներ	